

# Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Պատվիրատու՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Նախագծային կազմակերպություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ

ՇՄԱԳ իրականացնող՝

«ԳրինԹայմ» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆ 2025

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>4</b>
<b>1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>5</b>
<b>2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>6</b>
<b>3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ</b> .....	<b>7</b>
<b>4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ</b> .....	<b>14</b>
4.1. Նախատեսվող գործունեության համառոտ բնութագիրը .....	14
4.2. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ .....	18
4.3. Բարեկարգում և կանաչապատում .....	19
4.4. Ջրամատակարարում և ջրահեռացում .....	20
4.5. Էլեկտրամատակարարում .....	21
4.6. Ջեռուցում և օդափոխություն .....	22
4.7. Շինարարական աշխատանքների կազմակերպում .....	24
4.7.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր .....	24
4.7.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ .....	27
<b>5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</b> .....	<b>28</b>
5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը .....	28
5.2 Օդային ավազան .....	31
5.3 Ջրային ռեսուրսներ .....	32
5.4 Հողօգտագործում և հողային ռեսուրսներ .....	34
5.5 Կենսաբազմազանություն .....	35
5.6 Պատմամշակութային հուշարձաններ .....	38
5.7 Ժողովրդագրական կազմ և բնակաչություն .....	38
<b>6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>40</b>
6.1. Օդային ավազանի աղտոտում .....	40
6.2. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն .....	42
6.3. Թափոնների առաջացում և կառավարում .....	43
6.4. Աղմուկի և թրթռումների ազդեցություն .....	44
6.5. Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա .....	44

6.6. Աշխատանքի անվտանգություն.....	44
<b>7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....</b>	<b>46</b>
7.1. Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները.....	46
7.2. Մոնիտորինգ.....	47
<b>8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ .....</b>	<b>48</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....</b>	<b>49</b>

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ.....	50
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.....	53
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	56
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	56
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....	58
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂՔԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ, ԿԱՆԱԶՄՊԱՏՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ .....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ .....	67
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ .....	70
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ) .....	71
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ .....	77
ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ.....	79
ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ .....	80

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի նպատակը	ՀՀ դպրոցների սեյամիկ անվտանգության բարելավում
Պատվիրատու	ՀՏԶՀ
Նախագծային կազմակերպություն	«ՀԳՇՆ» ՍՊԸ, հեռ.՝ +374 10 27 43 07 Էլ. հասցե՝ <a href="mailto:hgsnvh@gmail.com">hgsnvh@gmail.com</a>
ՇՄԱԳ իրականացնող՝	«ԳրինԹայմ» ՍՊԸ, հեռ.՝ +374 55 354 -854 Էլ. հասցե՝ <a href="mailto:greentime.arm@gmail.com">greentime.arm@gmail.com</a>
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Լոռու մարզ, Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Երևանյան խճուղի 44/4
Հողատարածքի մակերեսը	1.92077 հա
Դպրոցի նախագծային հզորությունը	մինչև 576 աշակերտի համար նախատեսված դպրոց

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուման համար, որի նախագծային աշխատանքներն իրականացվել են «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Սպիտակի համայնքապետարանի կողմից 28.11.2024թ. տրված N ՆԹ-1864-24 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի սահմաններում:

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

1. Անշարժ գույքի իրավունքի գրանցման N 06092024-06-0075 վկայականը,
2. N ՆԹ-1864-24 նախագծման թույլտվությունը՝ տրված 28.11.2024թ.,
3. ինժեներաերկրաբանական հետազոտությունների արդյունքները,
4. ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
5. Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների: Նախատեսվող գործունեության աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-ի «ա» ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

## 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունն իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան, որում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները: Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.
- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լուսնների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

### 3. ՇՐՋԱՆԱՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

- **ՀՀ Սահմանադրություն (2015).** 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսներ հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ հոդված 12-ը՝ պետության խթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:
- **ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3) -** պահանջում է իրականացնել ծրագրերի դասակարգում ըստ կատեգորիաների՝ կախված գործունեության տեսակից և չափերից, իրականացնել ազդեցությունների գնահատում, և պետական փորձաքննության իրականացման արդյունքում ստանալ փորձագիտական եզրակացություն:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008)
- **ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:
- **ՀՀ Օրենքը Մթնոլորտային Օդի Պահպանության մասին** (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար

բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- **ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ;
- **ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
- **ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)** (Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):
- **ՀՀ Օրենքը Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998թ.)** սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը, և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:
- **ՀՀ Օրենքը Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006թ.)** սահմանում է Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները: Համաձայն օրենքի բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության դասակարգվում են միջազգային, հանրապետական և տեղական կարևորության տարածքների, ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:
- **ՀՀ Օրենքը Բուսական աշխարհի մասին (1999թ.)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության,



օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:

- **ՀՀ Օրենքը Կենդանական աշխարհի մասին (2000թ.)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները, և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:
- **ՀՀ Օրենք Սեյսմիկ պաշտպանության մասին (12 հունիս, 2002 թ.)** սահմանում է ՀՀ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ Քաղաքաշինության մասին օրենք (05 մայիս, 1998 թ.)** սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀՇՆ 31-01-2014** «Բնակելի շենքեր. մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին
- **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):
- **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:
- **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» (2003) սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների

գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:

- **ՀՀ Կառավարության որոշում N 108-Ն (2018 թ.)** «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» սահմանվում է քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչ գոտիների չափերը՝ ըստ բնակավայրի տարածքի, կանաչ գոտիների տեսակները և կանաչապատման տարրերի տեսակային կազմը (տեսականին)՝ ըստ գոտիականության, ինչպես նաև կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- **ՀՀ Կառավարության որոշում N 1059-Ա** (սեպտեմբերի 25, 2014 թ.) «Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և ռազմավարության բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- **ՀՀ կառավարության N 1404-Ն որոշում 02.11.2017թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ կառավարության N 781-Ն որոշում (31.07.2014թ.)** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության N 1504-Ն որոշում 25.12.2014թ.** «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»
- **ՀՀ կառավարության N 426-Ն որոշում 12.04.2018թ.** «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N 967-Ն ՀՀ (14 օգոստոս, 2008 թ.** «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին») հաստատում է ՀՀ-ում բնության հուշարձանների ցանկը՝ ըստ հավելվածի:

- **ՀՀ կառավարության որոշում N 71-Ն** «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» (հունվարի 29, 2010 թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում N 72-Ն** «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին որոշումը» (հունվարի 29, 2010 թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում N 596-Ն** (19 մարտ, 2015 թ.) ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» սահմանում է կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում N 426-Ն** (12 ապրիլի, 2018 թ.), «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգոխնայողության և էներգոարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին», որը սահմանում է համապատասխան տեխնիկական կանոնակարգի՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման N-1243-Ն** (30 նոյեմբերի, 2015 թ.) «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին», որը սահմանում է սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն** (28 դեկտեմբեր, 2020 թ.) ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 49-Ն** (24.03.2016) «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին»
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն** (28.03.2017) «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»

- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N15-Ն** (19.09.2012) «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 103-Ա** ՀՀՇՆ31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ա** (05.04.2018) «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» (<https://www.minurban.am/storage/Normative/43-A.pdf>):
- **ՀՀ կառավարության որոշում N 438-Ն** (20 ապրիլի, 2002 թ.) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին» հաստատում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը:

#### **Միջազգային համաձայնագրեր.**

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)

- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

#### **Ուղեցույցներ և ստանդարտներ**

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

**Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

##### 4.1. Նախատեսվող գործունեության համառոտ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Երևանյան խճուղի 44/4 հասցեում տեղակայված հողամասի սահմաններում, որի մակերեսը կազմում է 1.92077 հա՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06092024-06-0075 վկայականի: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, ինչպես նաև տարածքի շրջադարձային կոորդինատները (WGS-84 կոորդինատային համակարգով) բերված են [հավելված 1-ում](#):

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Լոռու մարզի քաղաք Սպիտակի հետերկրաչափային (1988թ.) կառուցապատված տարածքում՝ գործող թիվ 8 դպրոցի հարևանությամբ, կամ քաղաքի ծայր հարավարևմտյան թաղամասում:

Նախատեսվող նոր դպրոցի տարածքն իրենից ներկայացնում է որոշակի թեքությամբ տարածք, որտեղ ծառեր չկան: Տարածքում նախատեսվում է իրականացնել լայնամաշտաբ կանաչապատման աշխատանքներ՝ շուրջ 242 տարբեր տեսակի ծառերի տնկմամբ, որոնց մանրամասները բերված են սույն հաշվետվության բաժին 4.3-ում:

Նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը, տարածքի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման N 06092024-06-0075 վկայականը, Սպիտակի համայնքապետարանի կողմից 28.11.2024թ. տրված N ՆԹ-1864-24 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը), որը բերված է [հավելված 2-ում](#):

Սպիտակ համայնքի թիվ 8 միջնակարգ նոր դպրոցը նախատեսվում է կառուցել վերոհիշյալ վկայականի սահմաններում գոյություն հողամասի սահմաններում: Տարածքի իրավիճակային հատակագիծը ներկայացված է [Հավելված 3-ում](#), համաձայն որի գոյություն ունեցող ամենամոտ բնակելի շինությունները տեղակայված են նախատեսվող դպրոցի տարածքից ավելի քան 100մ հեռավորության վրա: Ներկայումս գործող թիվ 8 դպրոցի շենքը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքից հեռու շուրջ 33մ:

Նախատեսվող գործունեության նախագծային լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- ՀՀՇՆ 31-03-2018 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թ. հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
- ՀՀՇՆ 20.04 «Երկրաչափադիմացկուն շինարարություն»
- ՀՀՇՆ II-0.00-2006 «Հակահրդեհային անվտանգություն. նախագծման նորմեր»
- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»

- ՇՏՊ 2.01.07-85 «Բեռնվաճառներ և ազդեցություններ»
- ՇՏՊ 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»
- ՇՏՊ 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Համաձայն նախագծային լուծումների դպրոցը նախատեսված է լինելու մինչև 576 աշակերտի համար:

Դպրոցական համալիրի կոնստրուկտիվ սխեման ընտրվել է սեյսմակայուն շինարարության գործող նորմերի և կանոնների համաձայն:

Դպրոցական մասնաշենքերի կոնստրուկցիաները նախատեսված են մոնոլիտ երկաթբետոնե շրջանակներով, իսկ ծածկերը միաձույլ երկաթբետոնից՝ հիմնավորված համապատասխան հաշվարկներով: Պատերը միաձույլ երկաթբետոնից են՝ 20սմ հաստությամբ, որոնք կոշտ կապված են ե/բ շրջանակների հետ և մասամբ ծառայում են որպես դիաֆրագմաներ:

Նախատեսվող դպրոցական համալիրն ունի ծավալահատակագծային բարդ ձև, ուստի մասնաշենքերը միմյանցից բաժանված են հակասեյսմիկ կարաններով:

Դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 2529մ<sup>2</sup>, որը բաղկացած է 5 մասնաշենքերից, որոնք կազմում են ամբողջական համալիր և առանձնացված են սեյսմիկ կարաններով: Վերջինս հնարավորություն է ընձեռնում ապահովել մասնաշենքերի սեյսմակայունությունը և օգտագործել ռեկրեֆի թեքությունները: Դպրոցի տարածքում նախատեսված է նաև 37.5մ<sup>2</sup> կառուցապատման մակերեսով կաթսայատուն:

- **Մասնաշենքեր 1 և 2.** այս երկու ուսումնական մասնաշենքեր եռահարկ են, որոնք հանդիսանում են ուսումնական մասնաշենքեր՝ ներառելով դասասենյակները, լաբորատորիաների համակարգը և գրադարանը: Այս մասնաշենքերը միմյանց հետ կապված են 5 մետրանոց միջանցքով և ռեկրեացիայով:
- **Մասնաշենք 3.** եռահարկ է, որի առաջին հարկում ճաշարանն է՝ իր սպասարկման գոտիներով: Այս մասնաշենքում են տեղակայված նաև ֆոյեն և հանդիսությունների սրահը:
- **Մասնաշենք 4.** երկհարկ շինություն է, որում ներառված են սպորտդահլիճը սպասարկող համակարգերը՝ մարզիչի սենյակը, հանդերձարանները, ցնցուղարանները, սպորտգույքի սենյակը:
- **Մասնաշենք 5.** մեկ հարկանի շինություն է, որն իրենից ներկայացնում է սպորտդահլիճը, որի տակ տեղակայված են հրաձգարանը, ձեռնամարտի դահլիճը և սպասարկող սենյակները:

Դպրոցական համալիրն ունի ներքին բակ, որի վրա են բացվում ռեկրեացիոն գոտիների պատուհանները և պատշգամբները, և այն անմիջապես կապված է նաև ճաշարանի մեծ սրահի հետ:

Հատակագծային լուծումները ընդգրկվել են դասասենյակների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, ճաշարանի հարմարությունները ըստ գործող նորմերի: Դասասենյակները գտնուող են ըստ I-IV, V-VI և VII-IXI դասարանի աշակերտների բաշխման:

**Առաջին հարկում** են տեղակայված I-V դասարանի աշակերտների համար գտնուող դասասենյակների զբաղեցրած մակերեսները, արհեստանոցը, ճաշարանը, որոնք ապահովված են բակի կողմից առանձին մուտքով: Այս հարկում է տեղակայված նաև ուսուցչանոցը, բուժկետը, սանհանգույցները: Առաջին հարկը ապահովված է ռեկրեացիոն գոտիներով, որոնք ծառայում են որպես զբոսայգիներ:

Առաջին հարկում է տեղադրված սպորտդահլիճին սպասարկող բոլոր հարմարությունները:

Առաջին հարկի ճաշարանից և ռեկրեացիոն գոտուց ապահովված է ազատ մուտք դեպի ներքին բակ, որը իր ծավալով կնպաստի դպրոցի մշակութային կյանքի կազմակերպմանը:

**Երկրորդ հարկի** առանձին թևերում նախատեսվում է V-VI և VII-IX դասարանների աշակերտների ուսուցանումը:

Երկրորդ հարկում են տեղադրված ուսուցչանոցը, տնօրենի սենյակը և ադմինիստրատիվ բլոկն՝ իր առանձին զուգարաններով, ինչպես նաև մեթոդական սենյակը: Երկրորդ հարկի հատակագծային կարևոր հանգույց է հանդիսանում հանդիսությունների դահլիճը, որի բեմը ապահովված է թատերական դեկորացիաների սենյակով, դերասանական հանդերձարանով և ապակեպատ վիտրաժով մասնակցում է ներքին բակի ձևավորմանը: Ըստ աշխատանքային նախագծի ճարատարապետական լուծումների բեմի ապակեպատ հետնապատը նախատեսվում է կառուցել շարժական, որը հնարավորություն կտա ներկայացումներ կազմակերպել ներքին բակում:

**Երրորդ հարկում** տեղակայվելու են VII-IX դասարանի աշակերտների համար նախատեսված սենյակներ, մասնավորապես՝ նկարչական և երաժշտական ստուդիաներ, ինֆորմատիկայի սենյակներ, ինժեներական լաբորատորիա: Այս հարկում առկա է նաև ռեկրեացիոն բաց հարթակ, որը ևս կարող է ծառայել դասեր, պարապմունքներ և տարբեր այլ միջոցառումներ անցկացնելու համար: Այդ տարածքն ապահովված է երկու շվաքարանով և առանձին մուտքով դեպի տանիքի ծավալում տեղակայված ապակեպատ բուսաբանական լաբորատորիա:

Դպրոց ունի նաև նկուղային հարկ 1031.2մ<sup>2</sup>, որը օգտագործվելու է որպես թաքսոց:

Դպրոցի ողջ տարածքը նախատեսվում է բարեկարգված և կանաչապատել: Բակային հատվածում նախատեսված են ջերմոցներ, հրդեհամարաման ջրի կուտակման համար նախատեսված 2 ռեզերվուարներով, սպորտային մարզադաշտ, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք:



Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձվել մի շարք կարևոր հարցերին: Դպրոցական համալիրը ապահովված կլինի երկու վերելակներով, հատուկ զուգարաններով, թեքահարթակներով, որոնք նախատեսված են հենաշարժային խախտում/հաշմանդամություն ունեցող աշակերտներին սպասարկելու համար: Հետևապես դպրոցի բոլոր ենթակառուցվածքները կլինեն մատչելի և հասանելի հենաշարժային խնդիրներ ունեցող յուրաքանչյուր աշակերտի համար:

Դպրոցական համալիրի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և էվակուացիոն ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները:

Դպրոցի մասնաշենքերը նախատեսվում է ջերմամեկուսացնել համաձայն գործող նորմերի և տնտեսական նպատակահարմարության սահմաններում: Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Նախատեսված է տեսահսկման համակարգեր, որոնց օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև հեռախոսակապի համակարգ, համակարգչային ցանց, զանգային և ժամավորման ցանցեր:

Դպրոցի հողամասն ամբողջ պարագծով ցանկապատված է: Տարածքում նախատեսվում է 92.4 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված է 168 հատ ֆոտովոլտային վահանակներից:

**Աղյուսակ 1. Նախագծվող դպրոցի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները**

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ՑԱՎԱԼ
Դպրոցի նախագծվող տարողունակությունը	աշակերտ	մինչև 576
Մասնաշենքերի թիվը	հատ	5
<b>Ընդհանուր հողատարածքի մակերես</b>	<b>ք.մ</b>	<b>19207.7 (100 %)</b>
Դպրոցի շենքի և կաթսայատան կառուցապատման ընդհանուր մակերես		2566.5 (13.36%)
Այլ շինությունների (ջրամբարներ+ ջերմոցներ) կառուցապատման մակերես	ք.մ	250+96=346 (1.8%)
Բացօդյա ավտոկայանատեղիի զբաղեցրած տարածքի մակերես*	ք.մ	193 (1.01%)
Բացօդյա մարզահրապարակների (խաղադաշտ և վոլեյբոլի դաշտ) ընդհանուր մակերես*	ք.մ	1548 (8.06%)
Արևային կայանի զբաղեցրած տարածքի մակերես	ք.մ	604 (3.14%)
Աղբարկղերի համար նախատեսված բետոնե հարթակի մակերես	ք.մ	8 (0.04%)
Կանաչապատման գոտու ընդհանուր մակերես*	ք.մ	9993.2 (52.03%)
Բարեկարգման գոտու ընդհանուր մակերես, այդ թվում. - ասֆալտապատ ճանապարհ, 1603 ք.մ - մայթեր՝ 505 ք.մ - գրունտային ճանապարհ՝ 798 ք.մ - բրելկչա տիպի սալվածքներ՝ 438 ք.մ - բետոնե սալիկներով ծածկույթ՝ 605 ք.մ	ք.մ	3949 (20.56%)

<i>Ինժեներական ցանցեր</i>		
Ջրամատակարարում	լ/վրկ	1.33
Ջրահեռացում	լ/վրկ	2.93
Արևային ֆոտովոլտային կայանի հզորություն	կվտ	92.4
Արևային ֆոտովոլտային վահանակների քանակ	հատ	168

\* կանաչապատման տարածքի ընդհանուր մակերեսի համար հիմք են հանդիսացել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թ. ապրիլի 9-ի ՀՀՇՆ 31-03.01-2014 շինարարական նորմերի 43 և 44-րդ կետերը, համաձայն որոնց կանաչապատման ընդհանուր տարածքի մակերեսը՝ հողատարածքի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ կազմում է (9993.2+193+1548) x 100/19207.7=61.1%, որը ներառում է նաև բացօդյա մարզահրապարակների մակերեսը:

Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի:

Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը բերված է [Հավելված 4](#)-ում:

Դպրոցի ներքին հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից: Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն է դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող և այլ հարմարեցված լուծումներին (թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն): ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Շենքի տանիքն իրականացված է կազմակերպված ջրահեռացմամբ: Նոր դպրոցն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և էլքերով և այլն:

#### 4.2. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ

Դպրոցի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները իրականացվել են համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշման դրույթների, շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ, մասնավորապես.

- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
- արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,
- ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пенopleкс/ կիրառում,
- օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում և այլն:

### 4.3. Բարեկարգում և կանաչապատում

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին դպրոցի տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի կառուցապատումից ազատ մնացած տարածքները կբարեկարգվեն և կկանաչապատվեն: Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն (2018 թ.) որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Նախատեսվող նոր դպրոցի տարածքում ծառեր չկան և տարածքի 52.03%-ը կամ 9993.2 ք.մ. նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով: Տարածքում նախատեսվում է իրականացնել լայնամաշտաբ կանաչապատման աշխատանքներ՝ շուրջ 242 տարբեր տեսակի ծառերի տնկմամբ, ինչպես նաև իրականացնել սամշիտ, սիզամարգեր և ստեղծել ծաղկանոց:

Ուսուճասպիտակում տեղանքի բնակլիմայական պայմանները, կանաչապատման համար ընտրվել են հետևյալ բուսատեսակները

- սոճի դրիմյան - 25 հատ
- սոֆորա - 25 հատ
- սյունաձև թույա - 52 հատ
- կատալպա - 81 հատ
- յունիպերուս - 59 հատ:

Տնկարկն իրականացնելու համար կմշակվեն համապատասխան խորության և տրամագծի փոսորակներ: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար կկիրառվի հողային աշխատանքների արդյունքում տարածքից հանված և պահեստավորված բուսահողը՝ 8500մ<sup>3</sup> ծավալով: Վերջինս նախատեսվում է պահեստավորել ՏԻՄ-երի կողմից համաձայնեցված վայրում:

Կանաչապատ տարածքի ոռոգումն իրականացվելու է տարածքի հյուսիսային հատվածով անցնող de63 տրամագծի պոլիէթիլենային խողովակից: Ջուրը բաշխվելու է կանաչապատված տարածքի աջ և ձախ կողմերով: Մտող ջրագծին ոռոգման համակարգը միանալու է de90, de50, de40 PE 100 խողովակներով: Միացման հանգույցի 2 կողմերում նախատեսվում է կառուցել ե/բ կլոր փականային հորեր: Ներհրապարակային կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսվում է իրականացնել ջրման ծորակների միջոցով՝ նրանց միացնելով Φ32 ճկափող: Խողովակները տեղադրվելու են խրամուղում՝ ավազի նախապատրաստական շերտի վրա, ծածկվելու են ավազի պաշտպանիչ շերտով, այնուհետև նաև փափուկ բնահողից լիցքով՝ տոփանումով: Կանաչապատման և ոռոգման հատակագծերը բերված են սույն հաշվետվության հավելված 6-ում:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները,

որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

#### 4.4. Ջրամատակարարում և ջրահեռացում

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) համաձայն: Պայմանները չեն փոխվում, քանի որ նոր դպրոցը նախատեսվում է կառուցել այն տարածքում, որը ժամանակին նախատեսված է եղել նոր դպրոց կառուցելու համար:

Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են.

- ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում,
- ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն:

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել Վեռլիա Ջուր ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանը, ինչպես նաև ճարտարապետաշինարարական գծագրերը, գլխավոր հատակագիծը, տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը.

- խմելու-տնտեսական ջրամատակարարում,
- տաք ջրամատակարարում,
- հրդեհամարման համակարգ,
- կենցաղային կոյուղի:

Դպրոցի ջրամատակարարման համակարգը սնվում է դպրոցի տարածքից մոտ 120մ հեռավորության վրա տեղակայված 110 մմ տրամագծով քաղաքային ջրագծից: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 և PN20 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե խողովակակտորներով: Դպրոցի տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերը որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող անձանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրաքանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվել է 1.33 լ/վրկ:

Կենցաղային կոյուղու համակարգը կմիացվի տարածքի դիմաց գտնվող 300մմ տրամագծով քաղաքային կոյուղագծին, որի ելքերը կազմում են 2.93 լ/վրկ: Այն որոշվել է հաշվի առնելով նաև հրդեհամարման համար անհրաժեշտ ջրաքանակը:

**Հրդեհամարման համակարգ:** Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ, համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5լ/վրկ ելքով, ինչպես նաև սպրինկլերային համակարգ, որը սնվում է բակային տարածքում տեղադրված 2x40 մ<sup>3</sup> ջրի ռեզերվուարներից, որոնցում պաշարվում է հրդեհամարման համար անհրաժեշտ ծավալը:

#### 4.5. Էլեկտրամատակարարում

**Էլեկտրամատակարարում:** Էլեկտրական սնուցման համակարգերի և արտաքին ցանցերի իրականացումը կատարվելու է անմիջապես «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ: «ՀԷՑ» ՓԲԸ-ն պատասխանատու է լինելու դրանց շահագործման և անխափան աշխատանքի համար: Էլեկտրամատակարարման նախագիծը մշակվել է համաձայն ПУЭ-99, СП 311-110-2003 և ՀՀՇՆ 31-03.01-2014 դրույթների: Դպրոցի էլեկտրամատակարարումն իրականացվելու նպատակով տարածքում տեղադրվելու է 400 կՎԱ հզորությամբ ենթակայան:

10ԿՎ լարման արտաքին էլեկտրամատակարարման գծի նախագծումը և կառուցումը կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից: Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հրապարակած 25.12.2019թ. N523-Ն որոշման հիման վրա նախահաշվում և ծավալաթերթերում նախատեսված է 10ԿՎ լարման ցանցին սպառողների միացման միանվագ վճար, որը կազմում է 6 մլն. 141 հազ. դրամ: Նախատեսվում է, որ ենթակայանն ապահովված է լինելու յուղահավաք համակարգով՝ արտակարգ իրավիճակների դեպքում հնարավոր արտանետումների պահման համար:

Ենթակայանի 0.4կՎ դողերին միացվելու է արևային ֆոտովոլտային կայանի գլխավոր ավտոտմատ անջատիչը:

Ըստ էլեկտրամատակարարման հուսալիության աստիճանի շենքի հոսանքասպառիչները դասվում են 2 կարգի: Դպրոցի էլեկտրական սնուցումը իրականացվելու է 2 մալուխային գծերով: Նախատեսվում է ունենալ բանվորական և վթարային-էվակուացիոն էլեկտրական լուսավորություն: Բոլոր էլ. մոնտաժային աշխատանքները կիրականացվեն համաձայն գործող էլեկտրատեխնիկական նորմերի ու կանոնների:

Բաշխիչ վահանից սնող գծերը նախատեսվում է տանել դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով: Խմբային ցանցը նախատեսված է BBr ԽԻ-LS մակնիշի մալուխով ձկուն խողովակների մեջ:

Անջատիչները և վարդակները դասասենյակներում տեղադրվելու են հատակից 1.8մ, իսկ այլ սենյակներում՝ հատակից 0.8մ բարձրության վրա, վահանակները տեղադրվելու են հատուկ պատրաստված խորշերի մեջ՝ 1.5մ բարձրության վրա: Բոլոր լուսատուների և վարդակների սնուցումը նախատեսվում է իրականացնել 3 հաղորդալարերով, նեռարյալ՝ PE հաղորդալարը, իսկ բոլոր էլեկտրական սարքավորումների մետաղական կորպուսները կգրոյացվեն և կհողանցվեն: Հողանցման համար նախատեսված է TN-C-S համակարգը: Որպես պաշտանիչ միջոց նախատեսված է իրականացնել հողանցման օջախ 4 Օհմ դիմադրությամբ:

Շենքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսված են համալիր միջոցներ, մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում կատարվելու է հինգ հաղորդալարով, միաֆազ ցանցում՝ երեք հաղորդալարով, անցկացնելով նաև առանձին PE հաղորդալար՝ սկսած մուտքի վահանից:

Հրդեհի դեպքում նախատեսված է օդափոխության ամբողջ համակարգի անջատում:

**Արևային վահանակների տեղադրում:** Նախագծով նախատեսվում է 92.4 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր կրաթահամալիրի տարածքում: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 168 հատ ֆոտովոլտային վահանակներից:

ՖՎ կայանի հենակառուցվածքը մոնտաժվելու է նախապես կառուցված ե/բ հիմքերի վրա՝ զողման միջոցով: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն ենթակայանից սնվող մալուխով էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները մոնտաժվում են հենակառուցվածքի վրա ձգման, իսկ շարքից շարք՝ խրամուղով անցկացման եղանակով: ՖՎ կայանի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ:

#### 4.6. Ջեռուցում և օդափոխություն

**Ջեռուցում:** Նոր կառուցվող դպրոցի ջեռուցման և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն ճարտարապետաշինարարական գծագրերի և գործող համապատասխան շինարարական նորմերի, մասնավորապես.

- ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում»
- ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»
- ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»:

Ջեռուցումը նախատեսվում է ապահովել դպրոցի տարածքում տեղակայված կաթսայատնից (7.5մ x 5մ), որտեղ որպես հիմական վառելիք ծառայելու է բնական գազը՝ մատակարարվելով կաթսաների այրիչների արտաքին ցանցից:

Կաթսայատանը տեղադրվելու են 2 հատ 400ԿՎտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ: Տաք ջրամատակարարման համար տեղադրվելու է 1000լ տարողությամբ 2 ջերմափոխանակիչով ճնշումային ջրատաքացուցիչ բաք, որի ջերմամատակարարումն իրականացվելու է կաթսայից և արևային ջրատաքացուցիչ համակարգից: Կաթսաներն ունեն ցածր աերոդինամիկական դիմադրություն, ուստի ծխագազերի քարշը բնական է:

Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով, որոնք աշխատում են ցածր ճնշման բնական գազով: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել CO գազի ազդնշանային սարք, որից տրվում է ազդանշան գազի մուտքի խողովակի վրա տեղադրվող պահպանիչ փականին, որը փակում է գազմի մուտքը կաթսայատունօդում CO գազի թույլատրելի քանակի գերազանցման դեպքում: Գազամուղի փչամաքրման համար նախատեսված է նաև փչամաքրման խողովակաշար:

Համակարգի մոնտաժը, փորձարկումը, հանձնումը և շահագործումը իրականացվում է գազաբաշխիչ գործող նորմերի և կանոնների համաձայն:

Դպրոցի ներսում որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ջեռուցման ռադիատորներ՝ բացառությամբ սպորտասրահից, որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ՝ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

Ջերմային հանգույցում օդահեռացման նպատակով տեղադրվում են ավտոմատ օդահաններ: Օդի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով:

Դպրոցի մագիստրալ մատակարար և հետադարձ խողովակաշարերն առաջին հարկում անցնում են հատակի հաստության միջով, իսկ երկրորդ հարկում՝ առաջին հարկի առաստաղի տակով: Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով: Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվելու է հիդրավլիկ փորձարկման, որից հետո կկատարվեն խողովակների փչամաքրում:

**Օդափոխություն:** Դպրոցի օդափոխության համակարգը նախատեսված է ՀՀ գործող նորմերին համապատասխան: Նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ, որոնք գործելու են բուֆետի և քիմիայի կաբինետից, հանդիսությունների դահլիճից և մարզադահլիճից: Մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի համակարգերն աշխատելու են պարբերաբար՝ ըստ պահանջի: Էներգաարդյունավետության նպատակով դասարանների և կաբինետների համար ներածման-արտածման սարքերը նախատեսված են ռեկուպերատորով, տեղադրված արտաքին պատերին:

Որպեսզի աշխատող օդափոխիչներից բացառվի աղմուկի տարածումը, ներածման և արտածման օդատարների վրա՝ օդափոխիչից հետո, նախատեսված են աղմկախլացուցիչներ: Քիմիայի դասարանի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական դրդմամբ արտածում: Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածման համակարգ:

Սենյակներում ներածման և արտածման օդաքանակները հաշվված են համաձայն գործող նորմերի: Ինքնուրույն արտածման համակարգ՝ մեխանիկական դրդմամբ նախատեսված է սանհանգույցներից կանալային օդափոխիչներով: Ներածման և արտածման օդատարների բոլոր ճյուղավորումների վրա նախատեսված են ձեռքի կարգավորմամբ օդի կարգավորիչ փականներ: Ընդհանուր օդափոխության օդաքանակները որոշված են համաձայն СНиП 2.08.02.-89\*:

Բոլոր օդատարները ընդունված են ցինկապատ պողպատե նրբաթիթեղ, իսկ հանդիսությունների դահլիճի համար ընտրված են դեկորատիվ օդատարներ:

Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով: Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

#### **4.7. Շինարարական աշխատանքների կազմակերպում**

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- դպրոցի կառուցում,
- դպրոցի տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Շինարարական հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես նախատեսվող գործունեության տարածքի սահմանների ներսում, որի կազմակերպման համար հաշվի են առնված գործող նորմերով պահանջվող միջոցառումները, մասնավորապես.

- տարածքի ժամանակավոր ցանկապատում՝ ըստ անհրաժեշտության,
- շին. հրապարակի լուսավորության ապահովում,
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքեր՝ ապահովելով շին. հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, աշխղեկի աշխատասենյակ և այլն),
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը,
- շին. աշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

Կոմունիկացիաների վերատեղադրում չի նախատեսվում: Շինարարության նախապատրաստական փուլում կիրականացվեն անհրաժեշտ կոմունիկացիաների միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող գծերին (էլ. էներգիա, լույս, ջուր):

##### **4.7.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր**

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վարձակալել դրանք:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված ՏԻՄ-երի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:



Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլտվությամբ: Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին,
- ժամանակավոր շինությունների և ինժեներական ցանցերի տեղադրում,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել գործունեության հարակից տարածքների և Մպիտակ համայնքի շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում:

Դպրոցի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն բացառապես լիցենզավորված մատակարարներից: Կբացառվի հրապարակում բետոնա-

շաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները և հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից:

Շինարարության ժամանակացույցը, ինչպես նաև շին. հրապարակի կազմակերպման սխեման բերված է Հավելված 7-ում: Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես նախատեսվող գործունեության վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի գործունեության տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով՝ հնարավորինս չխոչընդոտելով գործող դպրոցի բնականոն առօրյային և դպրոցի հարակից տարածքի երթևեկությանը:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 5տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շին. աշխատանքների ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

**4.7.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ**

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3. Տեխնիկական միջոցների անվանացանկ\**

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
1.	Ավտոհինքնաթափ	10-14տ բեռնունակություն	2
2.	Ավտոամբարձիչ	36տ բեռնունակություն	1
3.	Ավտոբետոնախառնիչ	2մ <sup>3</sup> տարողությամբ	2
4.	Ավտոբետոնապոմպ	10 մ <sup>3</sup> /ժ արտադրողակ.	1
5.	Կոմպրեսոր	10 մ <sup>3</sup> /ր արտադրողակ.	1
6.	Հետահար մուրճ	ՄՕ-10	3
7.	Բուլդոզեր	59 Կվտ	1
8.	Էքսնավատոր	0.65մ <sup>3</sup> շերտի տարողությամբ	1
9.	Ինքնագնած գլղոն	առնվազն 6տ	1
10.	Ձեռքի տոփիչ	40 կգ	4
11.	Ասֆալտատեղադրիչ մեխանիզմների լրակազմ	-	1
12.	Զողման ապարատ պողպատի համար		4
13.	Զողման ապարատ պոլիէթիլենի համար		4
14.	Խորքային վիբրատոր	Իվ	4
15.	Մակերևույթային վիբրատոր		4

*\* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով*

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 26 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների առավելագույն թիվը գնահատվում է 136 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 12 մարդ,
- բանվորներ՝ 124 մարդ (ներառյալ՝ օժանդակ տնտեսությունները):

**5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը**

Հետազոտվող տեղամասը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Երևանյան խճուղի 44/4 հասցեում, որն իրենից ներկայացնում է կառուցապատումից և շինություններից ազատ տեղամաս: Տվյալ տարածքը տեղակայված է քաղաքի ծայր հարավարևմտյան թաղամասում, որն իրենից ներկայացնում է հետերկրաշարժի (1988թ.) կառուցապատված տարածք, որը գտնվում է գործող թիվ 8 դպրոցի հարևանությամբ:

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** ուսումնասիրվող տարածքը տարածքը գտնվում է Բազումի լեռների կենտրոնական ցածրադիր լանջերին, որտեղ ռելիեֆը կտրտված է բազմաթիվ փոքր ու մեծ ձորակներով և ժամանակավոր հոսքերով, որոնք ուղղված են դեպի Փամբակ գետը, վերջինս հանդիսանում է օրոգրաֆիկ հիմնական էլեմենտը, այս տարածքի համար: Բուն ուսումնասիրվող տարածքը հարթ է, փոքր թեքությամբ դեպի հարավ-արևելք և հանդիսանում է էյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ կուտակային (Փամբակ գետի ձախակողմյա, հունից բարձր II-III մակարդակ) դարավանդային տարածք: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են՝ 1610.0-1620.0մ սահմաններում:

**Կլիմա:** Սպիտակ համայնքը գտնվում է Լոռու մարզում: Ուսումնասիրվող տարածքը մտնում է չափավոր ցուրտ կլիմայական գոտու մեջ: Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 շինարարական նորմերի համաձայն՝ ստորև ներկայացված են օդերևութաբանական դիտարկումներով պայմանավորված որոշ կլիմայական տվյալներ նախատեսվող գործունեության տարածքի վերաբերյալ:

**Աղյուսակ 3.** Օդի միջին ջերմաստիճան (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Սպիտակ	-4.4	-3.4	0.4	6.7	11.5	14.6	17.6	17.9	14.2	9.0	3.3	-1.9	7.1	-25	36

**Աղյուսակ 9.** Օդի հարաբերական խոնավություն (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	ըստ ամիսների												Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ.	Սեպ.	Հոկ.	Նոյեմ.	Դեկտ.						
Սպիտակ	71	72	72	68	72	73	71	70	70	71	73	72	71	71	63	71	51	

**Աղյուսակ 10.** Մթնոլորտային տեղումներ (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յուլիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			Տարեկան
Սպիտակ	15	18	25	48	77	77	45	35	31	41	27	16	455	101	354
	20	21	23	57	83	39	53	54	25	34	24	28	83		

**Աղյուսակ 11.** Ջրան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Ջրան ծածկույթ			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ջրան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Սպիտակ	56	40	72	90

**Աղյուսակ 12.** Քամիներ (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Սամիսներ	Կրկնելիությունը, %								Մեծագույն կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների									
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
Սպիտակ	հունվար	1	1	10	1	1	9	62	15	Արլ	4.6	Արմ	4.2		
		3.6	4.1	4.4	4.7	4.9	4.6	4.2	4.3						
	ապրիլ	2	6	36	2	5	14	29	6					17	4.1
		3.2	3.2	4.7	3.7	4.4	4.6	4.1	3.3					28	3.2
	հուլիս	1	12	79	3	1	1	2	1					23	4.0
		3.4	4.7	4.6	4.7	3.1	4.0	3.1	2.9					41	2.5
	հոկտեմբեր	1	5	42	1	2	12	32	5						
		2.9	2.8	4.2	3.7	2.4	4.0	3.4	3.1						

**Աղյուսակ 13.** Քամու հաշվարկային արագություն

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (>15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ձ» տարիների ընթացքում		
				25	50	100
Սպիտակ	844.0	3.4	47	27	31	33

**Աղյուսակ 14.** Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C				
	ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը
	0.95	0.99			
Սպիտակ	25	27	36	24.3	12.3

**Աղյուսակ 15.** Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Օդի ջերմաստիճանը, °C								
	ամենացուրտ օրվա		ամենացուրտ հնգօրյակի		ամենացուրտ ժամանակահատվածի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր	
	ապահովվածություն							Միջին ջերմաստիճանը ժամանակահատվածի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր	0 °C-ից
	0.98	0.92	0.98	0.92	102	204			
Սպիտակ	-19	-18	-17	-15	-4.6	-25	8.3	-2.9	1.0

**Հիդրոերկրաբանական պայմաններ:** Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են բավական խորը, քանի որ տարածքում բեկորախճային, մանրախճային, ավազային շերտերի կուտակումները շատ են, իսկ ջրամերժ կավային շերտերը լայն տարածում չունեն, քանի որ ոսպնյականման կամ փակվում են, կամ էլ ավարտվում են: Ուստի ընդհանուր գրունտային ջրի հորիզոն չեն կազմում, իսկ հնարավոր գրունտային ջրերի առկայության դեպքում, նրանց դատարկման հորիզոնը շատ ցածր է և հասնում է մինչև Փամբակ գետի հունի մակարդակին կամ ավելի խորը: Բուն տարածքում, ըստ մեր հորատման աշխատանքների տվյալների, գրունտային ջրերը մինչև 12.0 մետրը բացակայում են:

**Երկրաբանական կառուցվածք:** Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են պալեոգենի հասակի ավազաքարեր, կրաքարեր և կավեր, ֆացիալ անցում հրաբխային ապարների, որոնք մերկանում են շրջակա բարձրադիր բլրալանջերում և լեռնաշղթայում, իսկ բուն տարածքում տարածված են ժամանակակից (QIV) էյուվիալ-դեյուվիալ և պրոյուվիալ առաջացումների բավական հզոր կուտակումներ:

**Երկրաբանալիթոլոգիական կառուցվածք:** Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքների վրա, առանձնացվել են գրունտների հետևյալ 3 շերտերը.

**Շերտ թիվ 1** **Բուսահող՝** մուգ մոխրագույն, մանրախճի պարունակությամբ մինչև 10%-ի չափով: Բեկորային նյութը թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով: Գրունտն ունի լայն տարածում ամբողջ տարածքով՝ 0.2-0.7 մետր հզորությամբ, ավազակավային կազմի: Ժ1Տ9վ- II

**Շերտ թիվ 2** **Կավավազ,** անցում ավազակավային գրունտի, բաց շագանակագույն, երբեմն մուգ շագանակագույն, մանրախճի պարունակությամբ մինչև 20%-ի չափով: Գրունտը խոնավ է, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, թույլ հղկվածության, ներկայացված տարբեր ապարներով: Ունի սահմանափակ տարածում, ինչպես բուսահողի տակ, այնպես էլ մանրախճային գրունտի շերտի տարբեր խորություններում և հատակային մասերում՝ 0.4-2.7 մետր անկայուն

հզորությամբ: Ժամանակակից էլյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ: Ժ1§34բ-II

**Շերտ թիվ 3 Մանրախճային գրունտ** կավավազային լցնով 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, մասամբ թույլ հղկված, ներկայացված տարբեր ապարներով: Ունի լայն տարածում ամբողջ տարածքում, մինչև 5-10 և ավելի մետր հզորությամբ: Ամբողջ հզորությամբ չի հասվել: Ժամանակակից էլյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ: Ժ1§13-IV

Հաշվի առնելով ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում ստացված տվյալները և ֆոնդային նյութերը կարելի է փաստել, որ հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման տեսակետից ունի բարենպաստ ինժեներա-երկրաբանական պայմաններ և ազատ է կառույցներից: Որպես հիմնատակ կարող են ծառայել թիվ 3 շերտի գրունտը (մանրախճային գրունտ):

Ցանկալի է հողային աշխատանքներն իրականացնելիս և նախագծային նիշերին հասնելուց, երկրաբանի դիտարկումը և եզրակացությունը աշխատանքների հետագա ընթացքը շարունակելու համար:

**Ֆիզիկաերկրաբանական** վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա, բացակայում են:

**Տարածքի սեյսմիկ բնութագիրը:** Համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում, որտեղ արագացման առավելագույն մեծությունը կազմում է  $A_{max}=0.5g$  և ունի 9 բալ և ավելի սեյսմիկայնություն:

## 5.2 Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դի-

տակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օդոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման համաձայն:

Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Սպիտակ քաղաքում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում, քանի որ բացակայում են մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչները և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ հրապարակված տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ժամանակավոր առաջարկությունների հիման վրա, որոնք վերաբերում են [«Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»](#): Վերջինիս համաձայն 10-50 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- փոշի՝ 0.095 մգ/մ<sup>3</sup>
- ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ
- ազոտի երկօքսիդ՝ 0.033 մգ/մ<sup>3</sup>
- ածխածնի օքսիդ՝ 1.1 մգ/մ<sup>3</sup>:

Սույն ցուցանիշները տարածվում են նախատեսվող գործունեության տարածքի վրա, հաշվի անռելով, որ այն գտնվում է Սպիտակ քաղաքի տարածքում, որի բնակչության թիվը կազմում է մոտ 17 000 մարդ:

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿՊ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում:

### 5.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «զերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ



դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է 6 ջրավազանային կառավարման տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Սպիտակ համայնքը գտնվում է Փամբակ գետի ջրահավաք ավազանում, որը ներառված է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում (ՋՏԿ):

Համաձայն [2024 թ. առաջին եռամսյակի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկագրում](#) բերված տվյալների, 2024 թ.-ին Հյուսիսային ՋՏԿ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում: Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև՝ հունվար և մարտ ամիսներին «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում՝ «վատ» որակ (5-րդ դաս): Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև, Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հունվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Տաշիր գետի ջրի որակը Սարատովկա գյուղից ներքև հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Մարց գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին և մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շնող գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև, Դիլիջան քաղաքից ներքև, Իջևան քաղաքից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Իջևան քաղաքից ներքև փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում փետրվարին և մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսվող գործունեության տարածքում և դրա մոտակայքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Բացի այդ ԲԿՊ-ում նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/ կանխմանը:

### 5.4 Հողօգտագործում և հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.


- բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:


Համաձայն ՇՄՆ [«Հիդրոգեոէկոլոգիայի և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների](#), հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: 2023 թ. 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար Լոռու մարզում իրականացվել են դիտարկումներ:

Ուսումնասիրվել են ֆոնային տարածքներ՝ կապված հիմնականում հանքարդյունաբերական տարածքների հետ: Լոռու մարզում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.7-25.0 անգամ, վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-24.5 անգամ, պղնձի պարունակությունը՝ 58.7-102.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.5-13.6 անգամ, արսենի պարունակությունը՝ 3.0-36.5 անգամ և մանգանի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ: Կապարի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Լոռու մարզի հողերի աղտոտվածության բաշխվածության քարտեզները ներկայացված են ստորև բերված նկարներում:

**Աղյուսակ 2. Լոռու մարզի հողերի աղտոտվածության բաշխվածությունն ըստ որոշ մետաղների**





Կառուցապատման ենթակա տարածքը հանդիսանում է սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը պատկանող համայնքային հողատարածք, որն ըստ նպատակային նշանակության բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Գործունեության տարածքը յուրացված է հարակից կառուցապատմամբ, ուստի նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա լրացուցիչ աղտոտվածություններ չեն կանխատեսվում:

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ տարածքի հողային ռեսուրսների վրա չեն կանխատեսվում:

### 5.5 Կենսաբազմազանություն

Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում են 12 ֆլորիստիկ շրջաններ: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Լոռու ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի, 2009թ) և գրավում է տափաստանային միջինլեռնային (1400-2300մ. ծ.մ.) լանշաֆտային գոտին որով էլ պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:

Լոռու ֆլորիստիկ շրջանում էնդեմիկ բույսերի քանակը 7 է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակերի թիվը՝ 47 (Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա, հինգերորդ ազգային զեկույց, 2014 թ):

**Բուսական աշխարհ:** Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Լոռու մարզը գտնվում է տարբեր բուսաաշխարհագրական մարզերի շփման վայրում: Ըստ Ա. Լ. Թախտաջյանի՝ ՀՀ տարածքի հյուսիսային հատվածն ընկած է Կովկասյան բուսաաշխարհագրական մարզի տարածքում, որտեղ բնորոշ են բուսականության մեզոֆիլ (խոնավասեր) տեսակները:

Բնական պայմանների նման բազմազանության պատճառով այստեղ նպաստավոր պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար:

Լեռնատափաստանային բուսականություն, որը ձևավորվում է բարեխառն չորային խոնավ կլիմայի պայմաններում. այն զբաղեցնում է ընդարձակ մակերես՝ տարածվելով մարզի ցածրադիր շրջաններից մինչև 2200-2300մ բարձրությունները:

Մարզի տափաստաններում տիրապետող բուսատեսակներից են՝ փետրախոտը (*Stipa pennata* L.), սեզ սողացող (*Elytridia repens* L.), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis* L.), շյուղախոտ մարգագետնային (*Festuca pratensis* Huds.), կծմախոտ (*Bothriochloa ischaemum* L.), իսկ խոնավ տեղերում՝ երիցուկ (*Tanacetum*): Չոր լեռնատափաստանների համար ավելի տիպիկ են փշոտ բույսերը, այդ թվում՝ գազ ասեղնային (*Astragalus picnophyllus* Stev.) և զանազան թփերը, մացառները:

Տափաստանային բուսականության առանձին տիպ են կազմում հացազգի բույսերը: Բավականաչափ տարածված են փշոտ գազաթփերը, որոնցից տեղ-տեղ ձևավորվում են տափաստանները: Դրանք բնորոշ են հատկապես Փամբակի լեռներին:

Լեռնաանտառային բուսականությունը հիմնականում տարածված է մարզի լեռնաշղթաների (Վիրահայոց, Բազումի, Փամբակի և Գուգարաց) զառիթափ լանջերին, 600մ-ից մինչև 2000-2100մ բարձրություններում, ուր սովորաբար տարածված են լվացված, հումուսով աղքատ հողերը: Լոռու մարզի անտառները հարուստ են ծառատեսակներով (մոտ 60 տեսակի ծառ, 90 տեսակից ավելի թուփ): Անտառի հիմնական ծառատեսակը հաճարենի արևելյանն (*Fagus orientalis* Lipsky) է, որը խոնավության և հողի նկատմամբ բավական պահանջկոտ ծառատեսակ է: Այն չի սիրում օդի ոչ շատ բարձր ջերմաստիճանները և ոչ էլ շատ խիստ ցրտի պայմանները: Հաճարենու հետ աճում են կաղնի արևելյան (*Quercus macranthera* Fisch. et C. A. Mey.), կաղնի վրացական (*Q. iberica* Stev.), թխկի վրացական (*Acer ibericum* M. Bieb.), լորենի կովկասյան (*Tilia caucasica*), բոխի սովորական (*Carpinus betulus* L.) և այլն: Կաղնին երբեմն կազմում է ինքնուրույն անտառ: Այստեղ տարածված է կաղնու երկու տեսակ՝ լեռնային կամ արևելյան և վրացական: Կաղնին համեմատաբար ցրտադիմացկուն և չորադիմացկուն է, ունի ամուր բնափայտ, երկարակյաց է, տալիս է բարձր որակի բնափայտ:

Ալպյան և մերձալպյան մարգագետնատափաստանային բուսականությունն իր սննդաբար ու հարուստ խոտածածկույթով կարևոր նշանակություն ունի մարզի անասնապահության զարգացման համար:

**Կենդանական աշխարհ:** Լոռին առանձնանում է նաև իր կենդանական աշխարհի բազմազանությամբ: Աշխարհագրական դիրքի առումով մարզն ընկած է Կովկասյան և փոքրասիական կենդանաաշխարհագրական մարզերի միջև: Արևելքից մասամբ մարզին հարում է նաև Իրանական (ընդգրկում է Կուր-Արաքսյան դաշտավայրերին կից նախալեռները) կենդանաաշխարհագրական մարզը: Սակայն ամենամեծ ազդեցություն ունի Կովկասյան մարզը: Լոռու կենդանական աշխարհի շատ տեսակներ ընդհանուր են այլ մարզերի համար: Սակայն հանդիպում են նաև կենդանիների այնպիսի տեսակներ, որոնք հատուկ են միայն Հայկական լեռնաշխարհին և Լոռու մարզին:

Լեռնատափաստանային գոտու կենդանական աշխարհը բնորոշ է հատկապես կրծողներով, որոնցից լան տարածում ունեն՝ սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), ճագարամուկը (*Dipodidae*), կույր մուկը (*Mus caecus*), համստերը (*Cricetinae*): Հերպետոֆաունայից առկա են Կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Միջին մողես (*Lacerta media*):

Թռչուններից տարածված են՝ բադը (*Anatidae*), գորշ կաքավը (*Perdix cinerea*), շիկահավը (*Erithacus rubecula*), ճնճղուկը (*Passeridae*), լորը (*Coturnix*), կաքավը (*Perdix*), ծիծեռնակը (*Hirundinidae*), կաչաղակը (*Pica*), արծիվը (*Aquila*), դաշտային (*Alauda arvensis L.*) և անտառային (*Lullula arborea L.*) արտույտները, անտառային ձիաթռչնակ (*Anthus trivialis L.*), սովորական քարաթռչնակը (*Oenanthe oenanthe L.*), ժուլան (*Lanius collurio L.*), մոխրագույն շահրիկ (*Sylvia communis Latham*), կանեփնուկը (*Linaria cannabina L.*) և սովորական կկուն (*Cuculus canorus L.*), սովորական հողմահար բազե (*Falco tinnunculus L.*) և տափաստանային ճուռակ (*Buteo rufinus Cretzschmar.*), ինչպես նաև սինաթրոպ տեսակներ՝ գյուղական (*Hirundo rustica L.*), տնային ճնճղուկ (*Passer domesticus L.*), գորշ ագռավ (*Corvus corone L.*) և կաչաղակ (*Pica pica L.*) և այլն: Այստեղ սողունները քիչ են:

Մերձալպյան և ալպյան գոտին ունի աղքատ կենդանական աշխարհ, որի պատճառը բնակլիմայական անբարենպաստ պայմաններն են: Այստեղ հանդիպում են լեռնային տափաստանների բնորոշ կենդանիներ՝ գորշ գայլ (*Canis lupus*), շնագայլ (*Canis aureus L.*), սովորական աղվես (*Vulpes vulpes*), նապաստակ (*Leporidae*), կզաքիս (*Saltus martes*), գետնասկյուռ (*Spermophilus citellus*), քարաբնակ կզաքիս (*saltus martes*):

Տարածաշրջանում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից են.

- թրաշուշան Ջավախքի - վտանգված տեսակ է, աճում է Տաշիր քաղաքի և Ուրասար գյուղի շրջակայքում,
- ջրաշուշան սպիտակ - վտանգված տեսակ է, հայտնի է Լոռու սարահարթի լճակներից,
- նեղտերև Դոդոնի - վտանգված տեսակ է, աճում է Տաշիրի շրջակայքում,
- գորտնուկ երկարատերև - վտանգված տեսակ է, աճում է Տաշիր քաղաքի, Սարատովկա և Նովոսելցովո գյուղերի շրջակայքում՝ գետերի ափին, խոնավ վայրերում,
- **Ասպլեն Վորոնովի (*Asplenium woronowii Christ*) - վտանգված տեսակ է, հանդիպում է Լոռու մարզի Գուգարքի և Սյունիքի մարզի Կապանի անտառային տարածքներում:**

ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից հայտնի են.

- նեղ խիտունջ - հազվագյուտ տեսակ է, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում,
- ճպուռ ճահճային - ծայրահեղ հազվագյուտ տեսակ է, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում,
- ստեփանավանյան առվակային գնայուկ և մթնաշաղային կապտաթիթեռ - հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Ստեփանավան քաղաքի շրջակայքում,
- Տարգալակտուզ - անհետացող տեսակ է, հայտնի է Ստեփանավանի շրջանի գերխոնավ տարածքներում,
- սպիտակաաչք սուզաբադ և մոխրագույն կռունկ - քիչ տարածված տեսակներ են, հայտնի են Ստեփանավանի լճակներից,

- բալոբան - անհետացող տեսակ է, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքից:

Ծրագրի ազդեցության ենթակա տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել, չկան նաև ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Սպիտակ քաղաքի Երևանյան խճուղի 44/4 հասցեի հողատարածքի սահմաններում, որն ամրագրված է համապատասխան անշարժ գույքի վայականով և տեղակայված է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային ակտիվ միջավայրում: Տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

## 5.6 Պատմամշակութային հուշարձաններ

Սպիտակ քաղաքի նոր միջնակարգ դպրոցի համար նախատեսված տեղամասի տեղազննության ընթացքում պատմամշակութային հուշարձաններ չեն հայտնաբերվել:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N [967-Ն որոշման](#) համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

Տեղամասում իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները հնագիտական շերտեր չեն բացահայտվել:

Թեև կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրությունները, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների, չեն պահանջվում, այնուամենայնիվ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից գործունեության տարածքում իրականացվել են նաև հնագիտական ուսումնասիրություններ, որի արդյունքները բերված են հավելված 8-ում:

## 5.7 Ժողովրդագրական կազմ և բնակչություն

Սպիտակ համայնքը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Վանաձոր-Գյումրի և Վանաձոր-Երևան ավտոմոբիլային մայրուղիների խաչմերուկում, Փամբակի հովտում, Փամբակ գետի և դրա վտակ Ջրաշենի ափերին, ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 22 կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 97 կմ: Քաղաքի բնակչությունը կազմում է մոտ 17000, իսկ վարչական տարածքը շուրջ 6066.75 հա:

Սպիտակի վարչական տարածքով են անցնում Թբիլիսի-Վանաձոր-Սպիտակ-Գյումրի-Հոկտեմբերյան-Մասիս-Երևան երկաթգիծը, Մ-3 «Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման» և Մ-7 «Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհները: Սպիտակ քաղաքը բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

Համայնքում գոյություն ունի 31 ավտոմոբիլային միաթռիչք և 3 երկաթուղային միաթռիչք բավարար տեխնիկական վիճակում գտնվող կամուրջներ:

Սպիտակ համայնքում գործում են մի շարք միկրոավտոբուսային երթուղիներ և հասարակական տրանսպորտի սպասարկման 27 կանգառներ:

Համաձայն Լոռու մարզպետարանի կողմից ներկայացված տվյալների Սպիտակ քաղաքի բնակչությունը ներկայումս կազմում է [17076](#) մարդ:

Մինչև 1988 թ.-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Սպիտակը արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացած քաղաքներից էր, որտեղ գործում էր 14 արդյունաբերական ձեռնարկություն: Ուներ 7 հանրակրթական և 1 գիշերօթիկ դպրոց, 12 մանկապարտեզ, Երևանի էլեկտրատեխնիկական տեխնիկումի մասնաճյուղ, մշակույթի տուն, 3 գրադարան, կինոթատրոններ, ժողթատրոն, պատմաազգագրական թանգարան, 2 մարզադպրոց, «Հեքիաթ» հանգրվանային համալիր՝ բաց և փակ լողավազաններով, բոնցքամարտի, ծանրամարտի, ըմբշամարտի կահավորված դահլիճներով, 5000 նստատեղով ֆուտբոլի մարզադաշտ՝ վազքուղիներով, կից խաղահրապարակներով, քաղաքային զբոսայգի՝ արհեստական լճակով: Առողջապահական համակարգում գործում էր հիվանդանոց, համաբուժարան, մանկական կոնսուլտացիա, ատամնաբուժարան, սանէպիդկայան:

1988թ. երկրաշարժը ընդհատեց Սպիտակի տարեգրությունը՝ արդյունաբերական քաղաքը ավերվեց 100 տոկոսով: Երկրաշարժին հաջորդած ավելի քան 2 տասնամյակում լայնածավալ շինաշխատանքներ են իրականացվել: Սպիտակում բնակարաններ են կառուցել՝ Շվեյցարիան՝ 180, ՌԻզբեկստանը՝ 230, Ռուսաստանը՝ 43, Էստոնիան՝ 78, «Հայաստան համահայկական հիմնադրամի» միջոցներով կառուցվել է 110, ՀՀ պետբյուջեի միջոցներով 145, Համաշխարհային բանկի միջոցներով 180 բնակարան: 147 բնակարան կառուցվել է Համաշխարհային բանկի և պետբյուջեի համաֆինանսավորմամբ, 78 բնակարան՝ Հայաստան համահայկական հիմնադրամի և պետբյուջեի համաֆինանսավորմամբ: Բնակարանաշինության ամենամեծ ծրագիրը (524 բնակարան) իրականացվել է ամերիկահայ մեծ բարերար Քըրք Քըրքորյանի հովանավորությամբ: Ընդհանուր թվով կառուցվել է 1769 հիմական բնակարան:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ, Ուրբան ինստիտուտի կողմից հատկացված ԲԳՎ-ներով բնակարան է ձեռք բերել 260 ընտանիք, ՀՀ պետբյուջեի միջոցներով՝ 79 ընտանիք: Այժմ քաղաքն ունի մշակույթի տուն, քաղաքային գրադարան, թանգարան, պետական քոլեջ, թվով 7 դպրոց, մանկական գեղարվեստի և երաժշտական դպրոցներ, մարզադպրոց, 2 նախակրթարան, եկեղեցի, նաև գործում են շուրջ 150 միջին և փոքր առևտրային, սպասարկման օբյեկտներ:

## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները գնահատվում նոր դպրոցի կառուցման գործողությունների ընթացքում, սակայն ազդեցությունները կլինեն ժամանակավոր՝ հաշվի առնելով շին. աշխատանքների ժամանակավոր բնույթը և տեղայնացվածությունը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ հիմնական դրական ազդեցությունները.

- ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում,
- նոր դպրոցի առկայություն և հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշվիվ բարեկարգ և ժամանակակից բացօդյա մարզահրապարակների,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին, աշակերտներին, մանկապարտեզի սաներին և աշխատակազմին իրենց աշխատանքն ու ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

### 6.1. Օդային ավազանի աղտոտում

Օրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 106 / 3600, \text{ գ/վ, որտեղ՝}$$

K1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէոզոլային մասնիկների, 0.02

K3 –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4



K6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 66 օր կամ

$$66 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 528 \text{ ժամ/շինարարություն:}$$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 25600 մ<sup>3</sup> կամ

3	Լող ծառերի անվան - տառային (100 0-ի կողմնակից զբոսայգիներ)	մ²	993.32
3	Լող ծառերի անվան - տառային (100 0-ի կողմնակից զբոսայգիներ)	մ²	993.32


ՊՐՈՇԽԱՆ	ԱՄՏԱՐԱՆ	ՍԵՂՈՒՄ	ՅԱՆՈՒՄ	ՁԵՆՁԱՐ
ՄՈՒԿԱՆՆԵՐ	ՍՊՈՐՏԱՆ	ՍԵՂՈՒՄ	ՅԱՆՈՒՄ	ՁԵՆՁԱՐ
ՄՈՒԿԱՆՆԵՐ	ՍՊՈՐՏԱՆ	ՍԵՂՈՒՄ	ՅԱՆՈՒՄ	ՁԵՆՁԱՐ
ՄՈՒԿԱՆՆԵՐ	ՍՊՈՐՏԱՆ	ՍԵՂՈՒՄ	ՅԱՆՈՒՄ	ՁԵՆՁԱՐ
ՄՈՒԿԱՆՆԵՐ	ՍՊՈՐՏԱՆ	ՍԵՂՈՒՄ	ՅԱՆՈՒՄ	ՁԵՆՁԱՐ


Ոռոգման հատակագիծ




ՊԱՇՏՄԱՆ	ԱՅԳՈՒՄԸ	ԱՏՐՈՒՄԻ	ԱՄՍՈՒՄ	ԼՈՒՈՒՄ ՄԱՐԺԻ ՄՈՒՏԱԿ ՀԱՏԱՅՆՔՈՒՄ ԳՏԱԿՈՐ 576 ԿՈՒՆԻ ԳՅՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԹԻՎ 8 ՄԻՋԱԿԱՆՈՂ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵՂԱԿԱՊԱՆՆ ԼՆԽԱԳՏԱՆԱԽԱՐԱԿԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹԳԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ						
ՆԳ	ԼՆԱԽԱՅՆՄԱՆ	ՈՒՈՒՈՑՄԱՆ								
ԲԱՅԻՒՊԵՏ	ՈՒՈՒՈՑՄԱՆ			ՆԵՐԳՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՈՒՈՂՈՒՄ						
ՆԱԽԱԳՏԵՑ	ԱՆԱԽԱՐԱՅՄԱՆ									
				ԳՆԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԱՐՏԱԵՆ ԶՐԱՄԱՏԱԿԱՐՄԱՆ, ԿՈՅՈՒՄ, ՈՒՈՂԱՄԱՆ, ՀԱՏԱԿԱՐԳԵՐՈՎ Մ 1:1000						
				<table border="1"> <tr> <td>ԺՈՒՆ</td> <td>ԹԵՐԹ</td> <td>ԹԵՐԹԵՐ</td> </tr> <tr> <td>Ա</td> <td>2</td> <td>7</td> </tr> </table>	ԺՈՒՆ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ	Ա	2	7
ԺՈՒՆ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ								
Ա	2	7								

## ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ






**ՄԱՍԻՎԵՆԵՐԻ ՍԻՆՍԱ**




- ՄԱՍԻՎԱԿԱՆ ԵԿՍՆՆԵՐ**
- երրորդ հիքից կատարվող V-րդ մասնաշենք
  - ավտուտակի պլանի աշխատանքի սահմանը շենքի երկու կողմից տեղակայված դեպքում
  - ավտուտակի պլանի աշխատանքի սահմանը շենքի մակառային կողմից տեղակայված դեպքում
  - ավտուտակի տեղաշարժի առանցք
  - Շինարարական պլանմուգեղանների և մեխանիզմների տեղաշարժման և շրջապատի պլանմուգեղանի

- Օմանաբացումներ**
- Երրորդ հիքից կատարվող V-րդ մասնաշենքի համար ավտուտակի տեղաշարժի ստորաբովանդակի 1 փուլում սահմանափակ մասնաշենքի երկու կողմից 180 երկաթուղային հատվածի համար 25\*8/1 մեկ կողմից շենքի մասնաշենքի հատվածից 20-47
  - Շինարարական մեքենաների և մեխանիզմների մուտքը և փակմանը պատասխան ամենալավ մուտքի կողմից և փակմանը և հնարավորության դեպքում կազմակերպել երկուսը մուտքը հնարավորություն դեռ չեն փակում:
  - Ցածկ փորվելու երկու CՎ-2 և CՎ-3 փորների նկատմամբ:

ՊՐՈԺԵԿՏԱՆ	ՆՈՐԱԿԱՆ	ՆՊՐԱՐՈՒՄ	ՅԱՆՎԱՐ	ԳԳ
ՆՈՐ	ՆՈՐԱԿԱՆ	ՆՈՐԱԿԱՆ	ՆՈՐԱԿԱՆ	ՆՈՐԱԿԱՆ
<b>ԼՍՄԻ ՍՄԻՏԻ ՄԻՍՏԱԿ ԱՆՍՏԱԿԱՆ ԳՅՈՒՄՆԻ ԳՆԱԿՆԻ ԴՈՒՐՈՒՄՁԱՆԻ ՔՈՒ 8 ՍԻՍԱԿԱՆԱԿ ԳՐՈՒՄ ԱՌՈՒՑԱՆԱԿՆԵՐ ԵՄԱՍԿԱՆԱԿԱՆ ԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍԿՐԻՄ</b>				
Շինարարական կազմակերպության նախագիծ			ՏԻՊ՝	ՄՈՒՐՈՒՄ
			Ս	ՇՎ-7 14
Երրորդ հիքից կատարվող V մասնաշենքի մեխանիզմների տեղաշարժի և շրջապատի սահմանափակման նկատմամբ				



**ՍԱՆՏԱՆԵՐԻ ՍԻՆՍԱ**



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵՂԱՆԵՐ**
- 2-դրոշմի հերթին կառուցվող IV-րդ մասնաշենք
  - ակտուալունիկի պաշտպանության սահմանը շենքի մեկ կողմից տեղափոխման դեպքում
  - ակտուալունիկի տեղաշարժի առանցքը
  - Շինարարական ակտուալունիկի սահմանի և միջանկյունի տեղաշարժման և շրջադարձի ուղղությունները

- Ճանաչագրություն**
1. 2-դրոշմի հերթին կառուցվող IV-րդ մասնաշենքի համար ակտուալունիկի տեղափոխումը ապահովվում է իրականացնելու մասնաշենքի մեկ կողմից
  2. Շինարարական մեքենաների և մեխանիզմների մուտքի և իրականացնելու գոյություն ունեցող վայրից կողմից և ակտուալունիկի հնարավորությունը ստանալու կարգավորումը կեղծող մուտքի հնարավորությունը դրանք շինարարական
  3. Տվյալ գծագիրը նախ ՇՄԱԳ և ՀՆՆ-10 գծագրերի հետ:

ՊՐՈՅԵԿՏԱՆԵՐ	ԱՐԿԻՏԵԿՏՈՐ	ՆՄՐԱՎՈՐ	ՍԱՄԱ	93
ՀՆՆ	ԼՄՆԱՆՍՏԱՆ			
ՇՄԱԳ-ՊՐՈՅԵԿՏ	ԼՄՆԱՆՍՏԱՆ			
ՊՐՈՅԵԿՏԱՆ	ԼՄՆԱՆՍՏԱՆ			
<p>ՄԱՍԻ ՄԱՍԻՆ ԱՐԿԻՏԵԿՏԱՆ ԳՏԱՆՈՐ 576 ՍՈՒ ԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՔՈՒՆ ՏՄԱՆԱԿԱՐԳ ԳՐԴՈՒՄ ԿԱՌՈՒՄԱՆ ՏԵՂԱԿԱՐԱՆ ԱՆԱՐԱՆԱԿԱՐԿ-ԱՅՈՒ ՑԱՆԱԿՈՒՄԻ ՍԵՆԱԿՈՒՄ</p>				
<p>Շինարարական կարգավորման ծախսեր</p>				ՊՐՈՒ
<p>2-դրոշմի հերթին կառուցվող IV մասնաշենքի կառուցումը ստանալու է Շինարարական մեքենաների տեղափոխումը և շրջադարձի ուղղությունները: Կառուցվածք ՑՄ 505</p>				ՄԱՍԻՆ
				Ա
				ՇՄԱ-Յ
				14

**ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ**

REPUBLIC OF ARMENIA  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
INSTITUTE OF ARCHAEOLOGY  
AND ETHNOGRAPHY SONP



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ  
И ЭТНОГРАФИИ ГНКО

12. 11. 2024 թ.

N 2470 - 406

«ՀԳՇՆ» ընկերության տնօրեն  
Վ. Հովասափյանին

Հարգելի՛ պարոն Հովասափյան,

Ի պատասխան Ձեր 04.11.2024 թ. դիմումի հայտնում ենք, որ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի թիվ 8 միջնակարգ դպրոցի հարևանությամբ գտնվող հողամասում (տարածքի մակերեսը՝ 1.92077 հա, կադաստրային ծածկագիրը՝ 06-006-0098-0016, կենտրոնական հատվածի աշխ. կոորդինատ. 40°48'57.01"N 44°13'28.02"E), որտեղ նախատեսվում է իրականացնել նոր դպրոցի կառուցապատում, կատարվել է հնագիտական վերգետնյա ուսումնասիրություն (կատարող՝ ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ. Ավետիս Գրիգորյան), որի արդյունքում պարզվել է հետևյալը.

- Ուսումնասիրված տարածքը գտնվում է Սպիտակի Անանիա Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոցի արևելյան կողմում, ունի փարթամ բուսականություննից և քարային կուտակումներից զուրկ հիմնականում հարթ մակերևույթ:

- Տարածքը մելիորացված է, տեղ-տեղ կան տեխնիկայով արված հողաթմբեր, հարավայրին հատվածում առկա են տեխնիկայով արված խորը ակոսներ և ակնհայտ է, որ հետախուզված տարածքում անխաթար մակերևութային հողաշերտեր չկան::

Հնագիտական տեղագնությամբ.

- Հետախուզված տարածքում հնագիտական (պատմամշակութային) որևէ հուշարձան (կառույցներ, կոթողներ կամ դրանց մասեր) չի փաստագրվել:

- Հետախուզված տարածքի մակերեսի զննությամբ չեն հայտնաբերվել հնագիտական գտածոներ (խեցեփեկորներ կամ այլ առարկաներ):

Արսեն Բոբոխյան

Ինստիտուտի տնօրեն



Երևան 0025, Չարենցի փող. 15, հեռ. / ֆաքս (37410) 55-68-96  
Ереван 0025, ул. Чаренца 15, тел. / факс (37410) 55-68-96  
Yerevan 0025, Charents str. 15, tel. / fax (37410) 55-68-96  
E-mail: arsen.bobokhyan@sci.am

**ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)**

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
<b>Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ</b>			
1. Հանրային լուսմներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	1.1. Նոր դպրոցի նոր շենքի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ս.թ. նոյեմբերի 29-ին, ժամը՝ 11:00-ին, Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի շենքում: 1.2. Հանրային քննարկման հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 30.10.2024 համարում:	«ՀԳՇՆ» ՍՊԸ, ՀՏԶ
2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ բնակելի համալիրի շինարարության և շահագործման փուլերում:	2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև կապալառուի պայմանագրային փաստաթղթերում:	«ՀԳՇՆ» ՍՊԸ, ՀՏԶ
<b>Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ</b>			
<b>Առողջություն և աշխատանքային անվտանգություն</b>			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և դպրոցի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշտադրական կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:	3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ): 3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն): 3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում: 3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում: 3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում	ՀՏԶ, Կապալառու

		<p>դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):</p> <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p>	
<b>Հանրության հետ կապ և հանրային իրազեկում</b>			
<p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>4.2. Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>ՀՏՁՀ, Կապալառու</p>
<b>Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
<p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p>	<p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</p> <p>2. Շին. աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</p>	<p><b>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</b></p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափազրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;</p> <p>5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p>5.1.6. Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացումը:</p> <p><b>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</b></p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափազրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանակացույցի:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝</p>	<p>ՀՏՁՀ, Կապալառու</p>



		<p>սամանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում:</p> <p>5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:</p> <p><b>5.3. Կենսաբազմազանության պահպանության կառավարում</b></p> <p>5.3.1. Հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանք պաշտպանությանը շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից:</p> <p>5.3.2. Էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների նույնականացման համար համապատասխան ճանաչողական պաստառների կիրառում՝ դրանց հայտնաբերման, և անհրաժեշտության դեպքում, պահպանության միջոցառումներ ձեռնարկելու համար:</p>	
--	--	--	--

**Շինարարական հրապարակի կազմակերպում**

<p>6. Շինհրապարակի կազմակերպում</p>	<p>Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ</p>	<p>6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>6.2. Շին. հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>6.3. Անհրաժեշտ է նախատեսել ավազի, ցեմենտի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորումը փակ տարածքներում կամ դրանց ծածկումն անթափանց թաղանթներով:</p> <p>6.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>6.5. Անհրաժեշտ է իրականացնել շենք ծածկումը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:</p> <p>6.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագուշացնող նշաններ:</p> <p>6.7. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում:</p>	<p>ՀՏԶՀ, Կապալառու</p>
-------------------------------------	---	--	------------------------

**Երթևեկության կառավարում**

<p>7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ</p>	<p>Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• երթևեկության խափանումներ</li> <li>• երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</li> <li>• փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ</li> <li>• հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում</li> <li>• շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին վնաս</li> </ul>	<p>7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով;</p> <p>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելիքային և յուղի արտահոսքը կանխելու համար:</p> <p>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:</p>	<p>ՀՏՁՀ, Կապալառու</p>
<p><b>Արտակարգ իրավիճակների կառավարում</b></p>			
<p>8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p>	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելիքային պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պատասխանների առկայությունը:</p> <p>8.6. Շին. աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պատասխաններ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությամբ</p>	<p>ՀՏՁՀ, Կապալառու</p>

		<p>յունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանամատյանում:</p>	
--	--	---	--

**Թափոնների և նյութերի կառավարում**

<p>9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p>	<p>9.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>9.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;</p> <p>9.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին. աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>9.4. Շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր՝ հատուկ սահմանված երթուղով:</p> <p>9.5. Շինարարական հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն:</p> <p>9.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p>	<p>ՀՏԶՀ, Կապալառու</p>
---	--	---	------------------------

**Աշխատողների վերապատրաստում**

<p>10. Աշխատողների վերապատրաստում</p>	<p>Թերի իրագրվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:</p>	<p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում՝ թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրագրել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ;</p>	<p>ՀՏԶ, Կապալառու</p>
<p><b>Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում</b></p>			
<p>11. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում 12. Կանաչապատում</p>	<p>Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը , թափոնները և այլն:</p>	<p>12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>12.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:</p> <p>12.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Սպիտակի համայնքապետարանի հետ:</p>	<p>ՀՏԶ, Կապալառու</p>
<p><b>Հ Ե Տ Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Վ Ա Ն Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն Փ ՈՒ Լ</b></p>			
<p>13. Թերությունների վերացման աշխատանքներ</p>	<p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p>	<p>13.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճած իրականացումը:</p>	<p>ՀՏԶ, Կապալառու</p>

**ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ**

Վայր/ Գործողություն/ Փուլ	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականությ ուն
<b>Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ</b>						
1. Հանրային լուսամներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղեկացվածությունտ ԲԱՄ-ի վերաբերյալ	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - տուգայցեր շին տեղամասեր, - հանրային լուսամներ, - բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան	ՀՏՁՀ, կապալառու	Հանրային լուսամները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը
2. Շրջակա միջավայրի պահպանություն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	շին. հրապարակ,	- ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	ՀՏՁՀ, կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՀՏՁՀ, կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհների և այլ կառույցներին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շին. հրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՀՏՁՀ, կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
5. Թափոնների և շին. նյութերի	- Շինարարական թափոնների և նյութերի	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավել-	ՀՏՁՀ, կապալառու	

կառավարում	կառավարումը շինարարության ընթացքում		կատարած ստուգայցեր	ցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:		
6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	ՀՏՁՀ, կապալառու	
<b>Շ Ա Ն Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ</b>						
7. Թերությունների վերացման աշխատանքներ	- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	բնակելի համալիրի տարածքի սահմաններում	Չափումներ	Աղմուկի, թրթռումների, հողի և օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:	ՀՏՁՀ, կապալառու	
8. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	ՀՏՁՀ, կապալառու	

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (բնակիչ, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված Պատվիրատուին/ չլուծված)

# ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ

(1-ին հանրային քննարկում)

### բ. Սպիտակ

29.11.2024թ.

2024թ. նոյեմբերի 29-ին ժ. 11:00-ին ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանում տեղի ունեցավ Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար, իսկ շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել նաև Սպիտակի համայնքապետարան, ինչպես նաև նախօրոք գրանցվել հանրային քննարկումների մասնակցելու համար:

Ճանրային քննարկմանը մասնակցել են Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի աշխատակիցներ, Պատվիրատու (Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ՝ ՀՏՁ2), նախագծող, կառուցապատող և ՇՄԱԳ իրականացնող ընկերությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Սպիտակ համայնքի բնակիչները:

### Նախագծի ներկայացում և քննարկում

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը հանդես եկավ բացման խոսքով, և ողջունեց հանդիպման մասնակիցներին: Նա նշեց, որ ՀՏՁ2 նախաձեռնությամբ մշակվել է Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցման նախագիծը, որը համաձայն ՀՀ օրենսդրության ենթակա է բնապահպանական փորձաքննության և այսօր հանրային քննարկման առաջին փուլն է: Նա նշեց, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար:

Այնուհետև նա խոսքը փոխանցեց բնապահպանության մասնագետ Ք. Մահակյանին, ով ներկայացրեց դպրոցի տեխնիկական ցուցանիշների և ճարտարապետական լուծումների վերաբերյալ մանրամասներ, ինչպես նաև անդրադարձավ նախատեսվող գործունեության բնապահպանական հասցեին:

Ք. Մահակյանը ներկայացրեց, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Երևանյան խճուղի 44/4 հասցեում տեղակայված հողամասի սահմաններում, որի մակերեսը կազմում է 1.92077 հա՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06092024-06-0075 վկայականի: Նախատեսվող գործունեության նախնաձեռնող լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա:

Նշվեց, որ դպրոցը նախատեսվում է կառուցել 576 աշակերտի համար, որը բաղկացած է լինելու 5 մասնաշենքերից, որոնք կազմում են ամբողջական համալիր և առանձնացված են սեյսմիկ կարաններով: Դպրոցի կոնստրուկտիվ սխեման ընտրվել է սեյսմակայուն շինարարության գործող նորմերի և կանոնների համաձայն:

Նա ներկայացրեց մասնաշենքերի և հարկերի նպատակային նշանակությունը, մանրամասները դասասնելակների գոտևորվածության վերաբերյալ, հատակագծային լուծումները, որոնք ընդգրկում են դասասնելակների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտադահլիճի, հանդիսությունների սրահի, ճաշարանի հարմարություններն՝ ըստ գործող նորմերի:

Նա նշեց նաև, որ տարածքում առկա նիշերի տարբերությունը թույլ է տալիս անձրևաջրերը ինքնահոս ուղղել դեպի դպրոցի տարածքի կանաչ գոտիներ: Արտաքին հրդեհամարման համար նախատեսված են 2 հատ ռեզերվուարների կառուցում, յուրաքանչյուրը՝ 40մ<sup>3</sup> ծավալներով: Կարևորվեց այն հանգամանքը, որ դպրոցական համալիրն ապահովված է լինելու վերելակներով, հատուկ զուգարաններով, թեքահարթակներով, որոնք նախատեսված են հենաշարժային խախտում/հաշմանդամություն ունեցող աշակերտներին սպասարկելու համար, ինչը թույլ է տալիս դպրոցի բոլոր ենթակառուցվածքները մասշտիբ և հասանելի դարձնել հենաշարժային խոչընդոտ ունեցող յուրաքանչյուր անձի համար:

Այնուհետև բնապահպանության մասնագետ Ք. Մահակյանն անդրադարձավ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրություններին: Նա նշեց, որ բնապահպանական փորձաքննության շրջանակներում նախատեսվում է անցկացնել ևս մեկ հանրային քննարկում, որին մասնակցելու է նաև շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը, ուստի համայնքի բնակիչները նախատեսվող գործունեության վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկությունները ուղղելու հնարավորություններ առաջիկայում ևս կունենան:

Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող բնապահպանական դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացող միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները, որոնք շինարարության կապալառուի կողմից ենթակա են պարտադիր իրականացման:

Նշվեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա: Որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր. փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի:

Ք. Մահակյանի կողմից կարևորվեց, որ նախագծային փաստաթղթերը պարունակում են տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ լուծումներ, համաձայն որի տարածքի ավելի քան 50%-ը նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով, որի վերջնական նախագծից համաձայնեցվելու է համայնքապետարանի հետ: Նախատեսվող գործունեության արդյունքում գործելու է նաև բողոքարկման մեխանիզմը, ինչը հնարավորություն է տալիս գործունեության ցանկացած փուլում բնակիչներին արտահայտել իրենց դիտողությունները առաջարկությունները, կարիքները:

Ամփոփելով իր ելույթը Ք.Մահակյանը նշեց, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցություններ՝ պայմանավորված ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավմամբ, և նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին, աշակերտներին, և աշխատակազմին իրենց աշխատանքն ու ուսումնական անցկացնել, առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

Մասնակիցների կողմից բարձրագլեցին հետևյալ հարցերը.

Հարց 1. Արդյոք դպրոցն ունենալու է նկուղային հարկ:

Պատասխան 1. Այո, դպրոցում նկուղային հարկ նախատեսված է՝ մոտ 1030Է մակերեսով, որը հնարավոր է օգտագործել նաև որպես թաքստոց:



Հարց 2. Արդյոք թաքստոցն ապահովված է լինելու անհրաժեշտ գույքով:

Պատասխան 2. Գույքի մասով կարծում եմ ոչ, սակայն տարածքն ապահովված է լինելու անհրաժեշտ ենթակառուցվածքներով՝ ջրամատակարարում, օդափոխության համակարգեր, սանհանգույցներ և այլն:

Հարց 3. Նշեցիք, որ դպրոցը բաղկացած է լինելու 5 մասնաշենքերից: Արդյոք այդ մասնաշենքերը բոլորը հարմարեցված են լինելու սահմանափակ կարողություններով անձանց համար և մասնաշենքերի միջև կապն ապահովված է:

Պատասխան 3. Այո բոլոր մասնաշենքերն ապահովված են սահմանափակ կարողություններով անձանց համար՝ սանհանգույցներ, վերելակ, թեքահարթակներ: Ֆունկցիոնալ կապը բոլոր մասնաշենքերի միջև ապահովված է շինության ներսից և արտաքինից այն դիտվում է որպես մեկ ամբողջական կառույց:

Հարց 4. Որքան են տնելու բոլոր աշխատանքները:

Պատասխան 4. Նախագծային աշխատանքների ժամկետը չեմ կարող հստակ այս պահին նշել, սակայն ասեմ, որ շինարարության նորմատիվ տնողությունը գնահատվել է շուրջ 38 ամիս, որն իր մեջ ներառում է նախապատրաստական, շինարարության, աշխատանքների հանձնման բոլոր փուլերը:

Հարց 4. Արդյոք նախատեսված է ցանկապատ և ավտոկայանատեղի:

Այո դպրոցի ողջ տարածքը լինելու է ցանկապատված, նախատեսված է նաև բացօդյա ավտոկայանատեղի, որի քանակը և մնացած այլ մանրամասները բերված են այս պահին ձեռք բերված գտնվող գլխավոր հատակագծում:

Մասնակիցների կողմից այլ հարցեր չտրվեցին: Ներկաներն իրենց գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեցին նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Հանդիպումն ամփոփեց Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը՝ շնորհակալություն հայտնելով հանդիպման մասնակիցներին: Նշվեց, որ առաջիկա ավագանու նիստից հետո կտրամադրվի նաև ավագանու դիրքորոշումը նախատեսված գործունեության իրականացման վերաբերյալ:

Մասնակիցների ցուցակը ներկայացվում է սույն արձանագրությանը կից:

Հանրային քննարկման տեսաձայնագրությունը հասանելի է Սպիտակի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային էջում:

Քննարկումների վարող

*Ս. Ֆրանգյան*

Ա. Ֆրանգյան,  
Սպիտակի համայնքապետարանի  
աշխատակազմի քարտուղար

Նախաձեռնող



Է. Գրիգորյան,  
«ՀԳՇՆ» ՍՊԸ, ինժեներ նախագծող

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

« 29 » նոյեմբեր, 2024

Լոռու մարզի Մայիսակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ

(1-ին փուլի հանրային քննարկում)

Մասնակիցների ցուցակ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1. Բոբոյանի Աստղիկ	Ք. Ե. Կարգապետ	091599327	Աստղիկ
2. Արսեն Կարամյան	Գրադարան	055-357-554	Արսեն
3. Զոհրաբ Գրիգորյան	ԿՊԸ Ք. Բ. Ծանուցարար	055-150-112	Զոհրաբ
4. Կարյան Զարգարյան	« Դ. Զարգարյան » ԱԾՈ ԻՎԵՍՏ	093485189	Կարյան
5. Զոհրաբ Գրիգորյան	Ապրիլյանի համայնքապետարան	99525220	Զ. Գրիգորյան
6. Զարգարյան Գրիգորյան	Ապրիլյանի համայնքապետարան	077836689	Զարգարյան
7. Կարգապետ Արսենյան	Կարգապետ համայնքապետարան	091236336	Արսենյան
8. Արսեն Կարգապետ	Ապրիլյանի համայնքապետարան	098-06-00-00	Արսեն
9. Արսեն Կարգապետ	Ապրիլյանի համայնքապետարան	091420632	Արսեն
10. Արսեն Կարգապետ	ԷՏՅՏ, արտոնագր	077-577021	Արսեն
11. Զարգարյան Արսենյան	Ապրիլյանի համայնքապետարան	036-43-43 00	Արսենյան

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
12. Արսենյան Զարգարյան	Ապրիլյանի համայնքապետարանի Ք. Բ. Ծանուցարար	077-02-4314	Արսենյան
13.			
14.			
15.			
16.			
17.			
18.			
19.			
20.			
21.			
22.			
23.			
24.			
25.			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: [masicpallitspitak@gmail.com](mailto:masicpallitspitak@gmail.com)

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » դեկտեմբերի 2024թ. № 167 - Ա

ԼՂՈՒԻ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ԹԻՎ 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի, հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 29-ին Սպիտակ քաղաքում տեղի ունեցած հանրային լսման արձանագրությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Նախնական համաձայնություն տալ «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող, Լոռու մարզի Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցի կառուցմանը:

ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱԶԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱՋԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԿՈՂՄ (16)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈՔՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 24  
ք. Սպիտակ